ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.11.2021թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2021թ. N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ Դավիթ Ստեփանյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Գասպարյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Հարթագյուղ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Դավիթ Թամարյան _____

Դավիթ Ստեփանյան _____

Արման Մխիթարյան _____

Սամվել Խառատյան _____

Արմեն Գասպարյան _____

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝
Հարություն Սարգսյան _____